ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 24 դեկտեմբերի 2018թ.

2018 թվականի դեկեմբերի 24-ին, ժամը 15:00-ին Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2019 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների 2019 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի բյուջեն հաստատելու մասին» որոշումների նախագծերի թեմաներով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Ջարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին,
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2019 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների 2019 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,
4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին:

համայքնի ավագանու որոշմուների նախագծերի քննարկում:

Օրակարգի առաջին հարցի շուրջ Լ. Պողոսյանը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշում է համայնքի ավագանին՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ ավագանին է հաստատում համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2019 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Համայնքի ղեկավարի ներկայացմամբ ավագանին է հաստատում նաև համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների 2019 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի բյուջեն հաստատելու մասին» հարցի շուրջ Լ.Պողոսյանը ներկայացրեց, որ համայնքի ավագանու որոշման նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի 2018-2022 թվականների զարգացման ծրագիրը և առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ

կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով: Որոշման նախագծի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը և հստակությունը: Համայնքի բյուջեի կառուցվածքը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով բաժանվում է վարչական և ֆոնդային մասերի: Եկամտային կանխատեսումներն ու ծրագրավորումները իրականացվում են յուրաքանչյուր մասերի համար առանձին: Համայնքի բյուջեի պլանավորումն իրականացվել է համեմատական մեթոդով, որի ժամանակ հիմնվել ենք վերջին երեք տարիների ընթացքում փաստացի համայնքային բյուջե մուտքագրված եկամուտների հոսքի և առկա բազաների հիման վրա: Բյուջեն պլանավորված է նպաստելու համար համայնքի համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարը ծրագրվել է 304 659.2 հազար դրամ, դեֆիցիտը (պակասուրդը)՝ 37 700.0 հազար դրամ:

1. Բյուջեի եկամուտների կանխատեսում

Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասի կանխատեսված եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 304 659.2 հազար դրամ՝ գերազանցելով նախորդ տարվա պլանավորված՝ ճշտված, բյուջեն 7.7 %-ով, որը կազմում է 21 887.8 հազար դրամ: Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 92 010.7 հազար դրամ՝ 2018 թվականի հաստատված 95 123.5 հազար դրամի դիմաց՝ պակասելով նախորդ տարվա ցուցանիշից 3.4 %-ով, որը պայմանավորված է տեղական վճարների գծով ավագանու որոշումով սահմանված արտոնություններով:

Նախագծով նախատեսված եկամուտների հիմավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման պարագայում:

Մասնավորապես.

1) Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտները ծրագրվել են 2019 թվականի համար 38 657.6 հազար դրամի չափով կամ 2018 թվականի հաստատված ցուցանիշից 2672.7 հազար դրամ կամ 7.4 %–ով ավել: 2019 թվականի հարկային եկամուտները ծրագրվել են հիմքում ունենալով 2018 թվականի կատարողականը, համայնքում հարկերի հավաքագրման համար իրականացվող միջոցառումների հետևողականությունը և արդյունավետությունը: Հարկային եկամուտները ծրագրելիս հաշվի են

առնվել առկա ապառքները և 2019 թվականի հաշվարկային ցուցանիշները: Հարկային եկամուտների կանխատեսվող աճը պայմանավորված է գույքային հարկերի բազաների ճշտումների արդյունքից, ինչպես նաև համայնքում նոր գրանցված փոխադրամիջոցների հարկից:

Տեղական տուրքերը ծրագրվել են 2 316.8 հազար դրամի չափով, որը 53.8 հազար դրամով կամ 2.3 %-ով գերազանցում է 2018 թվականի ծրագրային ցուցանիշը: Այն պայմանավորված է համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվությունների ավելացմամբ:

2) Պաշտոնական դրամաշնորհներ.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները նախագծով ծրագրվել են 210 081.8 հազար դրամ՝ 2018 թվականին նախատեսված գումարի համեմատ աճելով 13.5 %-ով կամ 25 001.0 հազար դրամով, իսկ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիաներ) պլանավորվել են հիմք ընդունելով 2018 թվականին հաստատված գումարները:

3) Այլ եկամուտներ.

2019 թվականի ծրագրով այլ եկամուտները նախատեսվել են 51 036.3 հազար դրամ՝ 2018 թվականի բյուջեով նախատեսված 58 685.1 հազար դրամի դիմաց կամ նվազել է 15.0 %-ով: Այլ եկամուտները իրենց մեջ ներառում են հողի և գույքի վարձակալությունից եկամուտները, վարչական գանձումները (նախադպրոցական և արտադպրոցական կազմակերպություններում համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարներ), տեղական վճարները, տույժերը, տուգանքները, պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները և այլ եկամուտներ: 2018 թվականի բյուջեով հաստատված ցուցանիշի նկատմամբ 15 %-ով նվազեցումը պայմանավորված է նախադպրոցական և արտադպրոցական կազմակերպություններում համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարների համար սահմանված արտոնություններից :

2. Բյուջեի ծախսերի կանխատեսում

Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 360 359.2 հազար դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի շուրջ 77.3 %-ը կամ 278 584.4 հազար դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), 81 774.8 հազար դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին (ֆոնդային բյուջե), իսկ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի գումարը կազմում է 18 000.0 հազար դրամ, դեֆիցիտը՝ 37 700.0 հազար դրամ:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերում 23.6 %-ը կամ 85 215.0 հազար դրամը բաժին է ընկել «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ոլորտին, 0.1 %-ը կամ 1 400.0 հազար դրամը՝ «Պաշտպանություն» և «Հասարակական կարգ, անվտանգություն և դատական

4.3) Ֆոնդային բյուջեի ծրագրված ծախսերի 0.3 %-ը կհատկացվի վերը նշված կապիտալ ծախսերի նախագծահետազոտական փաստաթղթերի պատվիրման համար:

4.4) Համայնքապետարանի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արդիականացմանը աջակցելու նպատակով ծրագրվում է ծախսելու 6 041.8 հազար դրամ՝ նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկներին անհրաժեշտ գույքի ձեռք բերման համար: Ակտիվների ձեռքբերման գծով ծախսերը պլանավորելիս՝ հաշվի ենք առել այն հանգամանքը, որ «Բյուրեղավանի համայնքային բարեկարգում և կանաչապատում» ՀՈԱԿ-ը համայնքում իրականացնում է աղբահանության աշխատանքներ և նրան աջակցելու նպատակով ծրագրվում է գնել նոր տրանսպորտային սարքավորումներ՝ 8 000.0 հազար դրամ արժեքով:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան